

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԹՈՒԽԵԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

«ՔԵՎ» ԹԵՐԹԸ ՀԱՇԱՊՈՒԲԻ աղքիւրներց հաղորդում է, որ շնորհեւ միտրապօլիս Անտօնիոսի «առաջադրութեան» ապագայ եկեղեցական համաժողովին կը մատնակցեն միմիայն եպիսկոպոսներ և ամուսնացած հոգեսրբականներց ոչ մինը մատնակեց չե լինիլ: Կասկած չկայ, — որ իրերի այդպիսի կացութեան ժամանակ եկեղեցական ժողովը ոչ միայն կենդանութիւն չի մտցնիլ եկեղեցու մէջ, այլ ընդհակառակին վերջնականապէս կը դարձնի բիւրօկրատիայի գործիք և աւելի կը մեծացնի հօտի և հովեւների մէջ գոյութիւն ունեցող վիճը: Խնչ կարծիք, որ այդ վիճ մէջ կը կրծանուի ոչ թէ հօտը, ոչ թէ ուսւու ժողովուրդը, այլ Քրիստոսի այն վարձկաններն, որոնք ամեն կերպ աշխատում են միայն իրենց վերապահել «քարի հավու ի» համբաւը: Նոյն Անտօնիոս միտրապօլիաը Պետերբուրգի բանտում բանտարկուածների հետ խօսելիս կարծիք յայտնեց յօդուտ մահուան պատժի պահպանութեան, որպէս Քրիստոսի վարդապետութեան և նրա պատգամներին չհակասող երեսյթի: Քայլ կասկած չկայ, որ ոչ այդպիսի խօսակցութիւններ, ոչ էլ ապադայ եկեղեցական «սե» ժողովում ուսւական եկեղեցու բիւրաւոր քահանացեց վսայ ուշադրութիւն չդարձնիլը մեր Թէոփան Պրոկոպիչներին չի օդնիլ պահպաննելու իրենց նշանակութիւնը բիւրօկրատիական աշխարհում: վաճառողները գուրս կը քշուին տաճարից և Ռուսաստանում կը օնական կեանքը կը վերածնուի քաղաքական կեանքի նման:

Ներկայ եպիսկոպոսների կլասիքական խօսքերը, որոնցով հակառակ են հանդիսանում ընդհանուր ներման և պնդում են պահպաննել մահուան պատիժը, Ա. Կրապօտիկինին յեշեցրել են բարի բժիշկ Թէոդոր Գաազի խօսակցութիւնը Մոսկվայի միտրապօլիս Ֆելարետի հետ: Բժիշկ Գաազը միտրապօլիտին սովո-

բարար ձանձրացնում էր ինչ որ անմեղ բանտարկեալների համար միջնորդութիւններ անելով:

—Թէոդոր Պետրովիչ, ինչու էր այդքան աշխատում նրանց համար, հարցրեց միտրապօլիտը. —միթէ կան անմեղ բանտարկեալներ: Եթզ մարդու միանգամ բանտն է ընկել, կը նշանակի, նա մեզաւոր է. անմեղ մարդկանց բանտ չեն ձգում:

—Զերդ բարձր Սրբազնութեան, բացականչում է Գաազը, պարմանալով քրիստոնէական եկեղեցու սպասաւորի խօսքերի վրայ. —Դուք Քրիստոսի մասին մոռացել էք:

Միտրապօլիտը ոթափուեց. Նրա յիշողութեան մէջ վերաբարտադրուեցին Աւետարանի ծանօթ էջերը, որ նա կարդում էր ըստ սովորութեան, կորցնելով նրանց կենդանի միտքն ըմբռնելու ընդունակութիւնը և որոնք այժմ բարի քժիշկ Գաազի անկեղծ և ջերմ բացականչութեան շնորհիւ աւելի հասկանալի դարձան: Միտրապօլիտ Ֆիլարետը յիշեց, որ ինքը թանկագին շուրջաւաներ հագնողը, մեծադիրն թագեր և պնակէներ կը ողը, մետքապօլիտական շքեղ ասպարանքներում ապրողը ծառայում է նըոն, որը գիշերուայ մթնում բռնուեց աշակերտի դաւաճանութեան շնորհիւ, դատուեց անարդար դատով, թուք կերպու ծաղը ու ծանակի արքանացաւ, արքենով ներկուեց: Միտրապօլիտը յիշեց, որ իւր կրօքին կը ում է խաչելութիւնը նրա պատկերով, որը կանգնած էր Պիդատոսի առաջ այն ժամանակ, երբ քահանայապետներից և դպիւներից գրգռուած ամբոխը աղաղակում էր՝ արձակիր մեզ Բարաբրային, իսկ դորան ի խաչ, ի խաչ հան: Միտրապօլիտը յիշեց, որ ինքը երկրպագում է նըրսան, ով որ խաչուեց և սպանուեց անարդ մահալ, որն իւր հոգին աւանդեց խաչի վրայ՝ աղօթելով իւր թշնամիների համար: Եւ նա իւր կոյր քարաօրառութիւնից զգացուած, զգալով իւր հոգեւոր ծանր անկումը, ինքն էլ Քրիստոսին դատի մասնող քահանայապետների նման բացականչեց. «Ի խաչ հան զգա»: Միտրապօլիտ Ֆիլարետը տխուր լոեց և ապա մեզմ ձայնով ասաց քժիշկ Գաազըն:

—Ո՛չ, Ֆէոդոր Պետրովիչ, եթէ ես շտապ արտասանեցի խօսքերս, ոչ թէ ես մոռացայ Քրիստոսին, այլ Քրիստոսը մոռացաւ ինձ:

Որքան լաւ կը լինէր, եթէ միտրապօլիտ Անտոնիոսը յիշէր Ֆիլարետի խօսքերն ու պարզէր իրեն համար, թէ ով ումն է մոռացել, միտրապօլիտը Քրիստոսին, թէ Քրիստոսը մետքապօլիտին:

„Наша жизнь“ թերթը հաղորդում է, որ շնորհիւ միտքապօլիս Անտօնիոսի գործ դրած արտակարգ եռանդի և նախարարութեան վուխութեան, ապագայ համառուսական եկեղեցական ժողովի կազմն արգէն որոշուել է: Եկեղեցական համաժողովին քահանայք և աշխարհականները կը մասնակցեն սրբէսգիտակ տնձինք, իսկ խնդիրներ լուծելու իրաւունքը վերապահուեմ է միայն եպիսկոպոսներին:

Հաւատացողի բաց դիմումը պրաւուալ եկեղեցուն:

„Полярная звезда“ շաբաթաթերթի № 8-ում տպուած է հետեւալ սրտաշաբաթ նամակը. —

— Ես չեմ կարող լուել: Բայց գնալ փողոց, հրապարակ, հաւատացող և սիրող մարդկանց մօտ՝ նշանակում է լսել նրանց մարդկային կարծիքը, բանալ որտեղ ողջ կոկիծը նրանց մարդկային սրտի առաջ, լսել նրանց մարդկային պատասխանը: Ինձ այդ չեմ հարկաւոր: Ես ժարաւի եմ եկեղեցու ձայնին. Ես տանջուեցի նրա ձայնը չլսելուց: Եւ ես թոյլ ու միայնակ, իսկ մենք առանց եկեղեցու միշտ միայնակ ենք, բայց հաւատալով ու գաւանելով մի սուրբ ընդհանրական և առաքելական եկեղեցի, այժմս վճռում եմ կամ այս կարգակ նրա ձայնին:

Ես առաջաց գիտեմ, որ շատերին գիմումու ծիծաղալի կը թուայ: «Եկեղեցի չկայ», — կասեն նրանք: Նատերի համար էլ կոչս կը լինի կատարեալ ըմբոսառութիւն: «Ո՞վ է նա, որ համարձակւում է գիմել եկեղեցուն», կասեն նրանք: Բայց առաջներին ես կը յեշեցնեմ Փրկչի խօսքերը: «Նինեցից զեկեղեցի իմ և զրունք գժոխոց զնա մի յաղթահարեսցեն»: Ես հաւատում եմ, որ եկեղեցին գոյութիւն ունի, ես հաւատում եմ, որ նա գոյութիւն ունի: Թէև աչքի համար անտեսանելի է. Ես հաւատում եմ, որ նեռի ոյժը չեմ յաղթել և չեմ յաղթիւ նըրան. Ես հաւատում եմ, որ կը գայ ժամը, երբ նա որպէս կին լուսազգեաց կը յայտնուի աշխարհին իւր ամբողջ վրառով, ամբողջ ոյժով և տմբողջ գեղեցկութեամբ:

Նըկրորդներին կասեմ. «Եթէ զուք հաւատում էք Քրիստոսին և եկեղեցին ձեզ համար մեռած ձայն չէ, այլ նրա կենդանի մարմինը, եթէ զուք՝ ոչ թէ խօսքով, այլ ձեր ամբողջ էութեամբ համկացել էք, որ կեանքի էութիւնը կայտնում է նրանում, որ Քրիստոս զգենունք և նրա մէջ մարմնացինք աշխարհը, որ ձեր իւրաքանչիւր շնչառութիւնը կատարուի յա-

նուն նորամ՝ — «Եւ եղեցի Առտուած ամենայն և յամենայնի», այդ դէպքում գոյք կը հասկանաք մի մարդու, որն այլ ևս չի ցանկանում քարշ տալ պայմանականութեան և զիջումների սորկական շղթաները, այլ ևս թագնուել անաստուածութեան զիմակի տակ չի ցանկանում, խոնարհութիւն կոչելով այդ, — և յանուն Յիսուսի, և լուր ամբողջ եկեղեցու, ցանկանում է յայտնել իրեն տանջող մտքերը:

Դեկտեմբերի մի շաբաթուոյ ընթացքում Մատիլան սարսափի այնպիսի օրեր անցըեց, ինչպիսիք նա՝ զուցէ երբէք չե ունեցել իւր քազմադարեան գոյութեան ընթացքում; Երկինքը բոցերից կարմրել էր. թնգանօթները որսուում էին. քաղաքը հրացանների արաքսոց անքում էր. ձիւնը ներկուել էր մարդկանց արթւնով. սոսկալի անդթութեամբ մարդիկ զնդակահարում էին իրար. սպանում էին մանուկներին, ծերերին և կանանց; Կատարւում էր մի մեծ մեղք: Եւ այդ մեծ մեղքի մէջ սարսափելին ոչ թէ այն էր, ինչ որ կատարւում էր, այլ այն, յանուն ինչ բանչ որ կատարւում էր այդ բոլորը:

Զինուարներից մինը՝ իրեն ուղղած պաղտանքին՝ սթափուելու և մարդկանց չկոտրելու, պատասխանեց. «Եթէ իշխանութիւնը հրամայելու լինի, հարազատ հօրս էլ կըսպանեմ, — ես երդուել եմ»: Ահա այս խօսքերի մէջն է կատարուող դէպքերի ողջ սարսափիը. յանուն Աստուծոյ տուած երդման համար էր արիւն թափւում:

Քրիստոնէական խիղճու չի կարող հաշտուել այդ բանի հետ: Քրիստոսի անունով եւզուել հօրը սպանելու, եթէ միայն իշխանութիւնը կը հրամայի, դա աւելի ժամոք է, քան թէ Քրիստոսից հրաժարութելը, քան փշեայ պատկին և խաչափայտի վրայ խաչելը: Այդպիսի սրբազնութիւն, այդպիսի ծաղը Փըկչի դէմնոյն իսկ Յուդան չէր կարող հսարել:

Ես եկեղեցուց խնդրում եմ բացատրել, ի՞րել ինձ այդ մղաւանջից, ցրուել կասկածներս և եթէ են անարդար եմ, ապաշխարութեան հրամայել ինձ . . . Գիտեմ, թէ ինչ կասեն ինձ եկեղեցու պաշտօնական ներկայացուցիչները. «Ամենայն ոք, որ ընդ իշխանութեամբ է, ի հսագանդութեան կացցէ, քանզի ոչ ուսաեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ»: Աստուած հրամայել է լոել իշխանութեան: Այս, հրամայել է: Բայց միթէ իրենք առաքեալները, երբ նրանց առգելեցին ուսուցանել յանուն Յիսուսի, չասացին այդ Աստուծուց եղած իշխանութեան. «Ինչ որ ճշմարիտ է Աստուծոյ առաջ, միթէ ձեզ աւելի պէտք է լսենք քան Աստուծոյ»: Միթէ բոլոր առաքեալներն իշխա-

Նութեանց չլսելու պատճառով չմեռան։ Ուրեմն կը նշանակի, որ այդ հնագանդութիւնը որոշ չափ ու սահման ունի։ Եւ միթէ այն չէ այդ սահմանը, որ Աստուծոյ պատգամներն աւելի բարձր գասենք, քան թէ մարդկային պահանջները և իշխանութեան պահանջները կատարենք այն չափով, ինչ չափով որ նրանք չեն հակասում Քրիստոսի պատգամներին։ Որովհետեւ Քրիստոսին հակառակողը նեռ է։ Եւ միթէ քրիստոնեայք նեռի աւելի պէտք է լսեն։ Դա սառութիւն է։ Դա հայհոյութիւն է ընդունէմ Սուրբ Հոգու և եռ պնդում եմ. «Աստուած չի ընդունում չարագործութիւն կատարելու պատրաստակամութեան համար տուած երգումը։ Այդպիսի երգումն ընդունողներին եկեղեցին անմիջապէս պէտք է ազատի տուած երգումից և այդ ձեռվ սրբի այն ամբողջ արիւնը, որը թափուեց Քրիստոսի անունով սուրբ և կենդանաբար խաչի վրայ։

Եայց այդ դեռ քիչ է։

Եկեղեցու պաշտօնական ներկայացուցիչներն ուսուցանում են, որ բանութիւնը թոյլատրելի չէ, որ բռնութիւնը ինչ նպատակի համար և ում կողմից էլ կատարուելու լինի, յանցանք է։ Քննադատելով ազատազրական շարժման արգար և անարդար կողմերը, նրանք խիստ կերպով դատապարտում են ծայրայեղ կուսակցութիւնների ընթացքը։ Նվանք առում են. քրիստոնէութիւնը չի կարսդ օրհնել ըռնութիւնը, նու մանաւանդ սպանութիւնը։ Բայց եթէ այդ այդպէս է, եթէ քրիստոնէութիւնը չի կարսդ սպանութիւնն արգարարնել ում կողմից էլ լինի այն, այդ դէպքում եկեղեցին պարտաւոր է նոյնպիսի շիտակութեամբ և որոշ կերպով, ինչպէս որ յեղափոխականներին է դիմում, դիմել և յայտարարել, որ նոյնպիսի անաստուած գործ են կատարում և զինուորները՝ սպանելով ազատութեան համար մարտնչողներին։

Ինչո՞ւ արդեօք դէպի ծայրայեղ կուսակցութիւններն այդպիսի շիտակ և որոշ գիմումն է տեղի ունենում, իսկ իշխանութիւնն ի չարք գործադրողների դէմ այդպիսի դատապարտելի լռութիւն։

Զի՞ որ ծայրայեղ կուսակցութիւններն իրենց եկեղեցու հետ չեն կապում։ Եկեղեցու պահանջներն ու հրահանգները նրանց չեն հասնում։ Միթէ եկեղեցին աւելի մեծ պարտաւորութիւններ չունի դէպի նրանց, ովքեր որ նրա հօտն են կազմում։ Եկեղեցին ինչո՞ւ է դատապարտում իրենց աթէիստ համարողներին, իսկ երբ իրեն զաւակներն են նոյնն անում, ստրկաբար լռում է։ Եթէ բարձր իշխանութիւնը, — զինուորները կատարում են

այնպիսի մի դորժ, որն եկեղեցու համոզմունքով քը իստոնեայք շպէտք է անեն, — միթէ նրա անմիջական պարտականութիւնը չէ ամենից առաջ նրանց դիմել, որովհետև նրանք իրենց ընգունում են եկեղեցու ծոցում: Մի առեք, որ խռովարաններն են առաջին ոկոսիները և այդ պատճառով նրանք ուելի մեշղաւոր են: Քրիստոսին բռնողներն առաջ զինուորներն էին և Պետրոսը ուուրը մերկացը պաշտպանուելու համար, բայց Քրիստոսը հրամայեց նրան ուուրը պատեանի մէջ դնել:

Եկեղեցին պարտաւոր է եշխանաբար և համարձակ բարձրացնել եւր ձայնը և եւր զաւակներին ապաշխարութեան հըշքաւիրել: Ես կարծում եմ, որ եկեղեցին պարտաւոր է անմիջապիս ապաշխարանք դնել գեներալ համանգապես Գուբատովի վրայ, ուպիս հաւատացողի, որը կատարուող շարագործութեանց զիսաւոր դեկապար եր եւ նրա նետ այն բոլոր մարդկանց վրայ, որոնք իրենց քրիստոնեալ են համարում, բայց արիւն իին բափում, նոկ եթէ նրանք կը մերժեն ապաշխարանքը, այդ գէպքում բառնաղըել և մերժել եկեղեցուց:

Բայց եկեղեցին, Քրիստոսի մարմնը, չի կարող միայն այդքանով սահմանափակուել: Մինի մեղքը սուլորի գֆբաղդութիւնն է: Մէկին ապաշխարանքի ենթարկելով, միւսներին պէտք է աղօթքի կոչել, այդ պատճառով ամբողջ պրաւուլտւ եկեղեցու համար պէտք է պահէ սահմանել յանուն այն վշտի, որ պատճառեցին նրա զաւակների մեծամեծ մեղքերը և եռանդադին աղօթել, որ Աստուած ներումն չնորհի և մաքրի այդ մեղքերից:

Մեզ մօտ, որտեղ ըոլորովին գոյութիւն չունի ծխական կեանքը, որտեղ կատարելապէս իրաւագուրի են աշխարհականաները և ամենաորբասպիզ կերպով ոտի տակ են արուած եկեղեցու ժողովական ոկզբունքները, ես՝ մամուլին գիմելուց բացի ուրիշ ելք չեմ դանում: Ես խնդրում եմ ըոլորին, որոնք համակրում են առաջարկութեանս, արտատպել այն իրենց հրատարակութեանց մէջ: Թող իմ քը իստոնեայ եղբայրներս ու քոյքերս քննեն այն իրենց մէջ, և այն ժամանակ, ես թէե չգիտեմ ինչպէս, բայց կըստանամ այն, ինչի մասին որ խնդրում եմ: Ես հաւատում եմ, որ եթէ «կոչոս» իսկապէս հասնի եկեղեցուն, իսկապէս հասնի հաւատացեալների ժողովին, այդ գէպքում կը լսեմ եկեղեցու ձայնը:

— Համակրանքով զետեղելով հաւատացող Սինեցկու սոյն կոչը, ցաւօք սրտի պէտք է առենք, որ պաշտօնական պշաւուլու եկեղեցին դեռ չի թօթափել ըեւրօկրատիկական շղթաները, գեռ մահուան պատիժն է քաջալերում ու արդարաց-

նում յանուն Ցիսուսի և ընթանում բարձր իշխանութեան քմահաճոյքի համաձայն, որ պաշտօնական եկեղեցին դեռ ժողովրդին ծայնատէր չի համարում ու ըստի տեղ չի գնում, իսկ ժողովուրդն էլ դեռ չի ըմբռնել իսկական եկեղեցու ողին և իւր պարտքն ու իրաւունքը՝ իսրեա այդ եկեղեցու անգամ:

Պետերբուրգից հեռագրով հաղորդում են, որ ռուսական եկեղեցական համաժողովի նախընթաց ընդհանուր ժողովում քննուում էր հոգեոր դարձանոցների բարեփոխութեան խնդիրը: Երկու ընդդիմախօսութիւններից յետոյ, որին մասնակցում էին Արքին եպիսկոպոսը, Գարչակով և Ակոսակով Աւառեցչապետները, լինքու կայացաւ պահպանել ընդհանուր տիպարի միջնակարգ դպրոցներ, որոնք կռւնենան ութը դասարան ընդհանուր կրթական դառընթացով և երկու հովուական դասարաններ՝ քահանայութեան պատրաստուողների համար:

Մեզ համար էլ պէտք է դառ լինի այս գեղեցիկ որոշումը և մենք էլ պէտք է որոշ բարեփոխութիւն մացնենք մեր գպրանոցներում թէ՞ ոչ և առ հասարակ ըոլոր սաներին մինչնոյն նպատակի համար և նոյն ծրագրով կրթենք. կարծում ենք սա աւելի քան ժամանակակից և հետաքրքիր խնդիր է:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Միք-Բոյի ամսագրում կարդում ենք.

Անգլիական հոգեորականութիւնը երբէք իւր ամբողջութեամբ պահպանողական չէ: Աբմատական «Reinolds Newspaper» շաբաթաթերթը հաղորդում է, որ անգլիական հոգեորականութեան որոշ մասը շատ եռանդուն աջակցութիւն է ցոյց տուել վերջին ընտրութիւնների ժամանակ քանուորական կուսակցութեան: Նոյնը հաստատում է անգլիական հոգեորականներից մինք, որը յիշեալ լրագրում գրում է հետեւեալը. «Որպէս աղասամիտ և ընկերվարական, ես ուրախանում եմ աղատամիտ կառավարութեան դարձին և ընտրութիւնների ժամանակ բանուրական կուսակցութիւնների յաղթանակին: Մենք՝ սուրբ Մատթէոսի եկեղեցուն ըոլոր պատկանողներս և հոգեորականութեան այլ անձինք ըոլոր ուժերով պաշտպանում էինք մեր շրջանի